

Right

Type - Penfinsular C

891.5505
U-52

ԱՐԵԴԱՆԱՆ ԱՅՆ

30 MAY 2011

ՅԻՆ ՄԱքՏԱԲԵ



891.550

6-52

ՊԵՏՐՈՎ ՁԵՐԵՎԱՆ 1937

8

2

ԱԿ ՍՍԴՐԵԴԴԻՆ ԱՅՆԵ

891 5505

4-52

ՀԻՆ ՄԱՔՏԱԲԵ

Նկարներ
Պ. ԿՈՐՈԼՅՈՎԻ



ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ Կից մանկա-պատասխանական գրական բաժին
ԵԽԵՎԱՆԻ
1937

- 8 FEB 2013



2922
38

Յես վեց տարեկան եյի, յերբ հայրս ինձ տարավ՝
մեք դշլաղի (գյուղի) մզկիթին կից մաքտաբը*):

— Յերբ դու չորս տարեկան, չորս ամսական և
չորս որական եյիր, մենք քեզ մատուցարանով ու
սուփրայով դպրոց ուղարկեցինք, — առաջ մայրս ինձ
հրաժեշտ տալիս: — Այն ժամանակ դու բոլորովին
փոքր եյիր, սիրոս ցավում եր քեզ համար, և մենք
քեզ բաց թողեցինք, վոր դեռ խաղաս դու, վազ-
վզես: Իսկ հիմի, աշխատիր հասնել մյուս յերեխեքին.
Հե՞ վոր նրանք չորս տարեկան հասակից են սովորում:

Յեզ ահա յես դպրոցումն եմ: Այն սենյակը, ուր
սովորում եյին յերեխաները, բոլորովին նման չեր մեր
ընդարձակ, լուսավոր և խաղաղ սենյակին: Դա մի
նեղ ու փոքր սենյակ եր՝ յերկու դռներով: Մուտքի
դռուը նեղ եր, ընդամենը մեկ փեղկից. ձմեռը, ցրտե-
րի ժամանակ դռուն ամուր բռնում եյին: Յերկրորդ
անկյունի դռուը բոլորովին փոքր եր, կես արշին լայ-
նություն ուներ և յերեք քառորդ արշին բարձրու-
թյուն: Ուսուցիչը լուսամուտի նման մի բան եր բա-
ցել այդ գոան վրա և թուղթ եր կպցրել, խսկ վոր-
ակսղի անձրեկից ու ձյունից չքրքրվի, ձեթ եր քսել
նրան: Զիթած թուղթը փողոցից լարձրացով փոշուց
կեղասովել ու սևացել եր այն փալասի կտորի նման,
վորով փակում են կաթսայի բերանը՝ փլավը յեփելիս:

* Մաքտաբ—ուսումնարան, դպրոց: Ծ. Պ.

Այդ փոքրիկ պատուհանի միջով լույսը հավել էր աղոտ կերպով թափանցում։ Ճիշտ ե, առաստաղի տակ ելի յերկու զույգ մանր — մեկ քառորդ արշին մեծությամբ պատուհանիկներ կային, բայց նրանցից յույսը վոչ թե հատակին եր ընկնում, այլ պատերի վերևի մասերին։

Յերկայնքով ու լայնքով իրար վրա գցած յերկուական գերանները սենյակը բաժանում եյին իննը բաժանմունքի։ Այդ բաժանմունքները ախոռի նման նեղ եյին։ Փոքրիկ դռան մոտ, առաջին անկյունի «ախոռը» ուսուցիչներ դրավում, մուտքի դռան մոտի ախոռում տրեխներն եյին զնում։ Իսկ մնացածներում նստում եյին յերեխանները։ Այժմ յես չեմ հիշում, թե քանի աշակերտ կար դպրոցում։ Միայն հիշում եմ, վոր այնտեղ սովորում եյին մեր գյուղի չորսից տասնյերկու տարեկան հասակ ունեցող բոլոր յերեխանները, ինչպես և հարեան գյուղերի յերեխաններից շատերը։ Մեր դշլաղը ասածուն լայեղ վայր եր համարվում ինչպոք ժամանակ այնտեղ «սբրեր» եյին ապրել։ Իսկ միայն մեր գյուղում, ինչպես ասում եյին, յերեք հարյուրյակ տուն կար։

Դպրոցը ինձ մեր փոքր հավանոցի նման բան թըլաց, ուր մայրս հավերին նստեցնում եր ձվերի վրա և ուր սովորաբար նստում եր թուխաը՝ փուլած թեերի տակ հավաքելով իր ճուտերին։ Տարբերությունը միայն այն եր, վոր մեր ճուտերը ծվծվում եյին դուրեկան ու բարակ ձայնով, իսկ դպրոցականները այնպիսի աղմուկ ու աղաղակ եյին բարձրացնում, վոր ուզեյիր չուզեյիր պետք ե ականջներդ փակեյիր։

Հայրս ինձ հետ մտավ դպրոց և ներկայացրեց նվերները — մատուցարանի մեջ, սփոսոց — դաստարխանի^{*}) մեջ փաթաթած լավաշն ու քիչմիշը։ Ուսուցի-

* Դաստարխան Տաճկաստանում այն սփոսոցին են ասում, վոր շաշի ժամանակ փոռում են դորգերի կամ խսիրների վրա։ Դաստարխան ե կոչվում նաև նրա վրա տված հյուրասիրությունը։

Հը բացեց դաստարխանը, կտրեց լավաշը մի քիչ ինքը կերպով և հյուրասիրեց հորս։ Մի պատառ ել հայրս կերպով։ Ապա ուսուցիչը մյուս լավաշը բրդեց և փշրունքները շպրտեց յերեխաններին, այնպես, ինչպես հավերին կուտ են գցում։

Դպրոցում անմիջապես աղմուկ բարձրացավ, լսվեցին չըխկոցներ, ապահովի շրպպոցներ և խալաթների խշխոց։ Բղավոցներից, ճչոցներից և վոռնոցներից թվով եր թե առաստաղն ողբ բարձրացավ։ Ուսուցիչը ձեռքերը մեկնեց դեպի հետեւ։ Այնտեղ, նրա թիկունքի հետեւմում, պատին ցցված եյին զանազան յերկարության դավագաններ։ Վերցնելով նրանցից մեկը — հինգ արշինանոց մի զագանակ, ուսուցիչը սկսեց նրանով խիմել յերեխանների գլուխներին։ Այդ դագանակից դլուխն ազատելու հնար չկար, նրա ծայրը հասնում եր դիմացի պատին։ Յերեխանները դադարեցին կռվելուց և բոլոր բերաններից միենույն աղիողորմ ճիչը դուրս թռապ։

— Վա՛յ, դոմուլլո, վա՛յ վարժապետ ջան, ել չենք անի…

Այդտեղ ել չհամբերեցի ու յես ել նրանց հետ միասին սկսեցի լաց ու կոծ անել, թեև վոչ վոք ինձ չեր ծեծել։ Հայրս սկսեց ինձ հանդստացնել։ Նա խոստացավ ինձ մի քուռակ նվիրել, յեթե յես դպրոց գնամ և լաց չլինեմ։ Իսկ ուսուցիչը ավելացրեց։

— Ամեն բազարի որ քեզ մի կտոր շաքար եմ տարու։

Հորս խոստումները չեյին կարող ինձ հաշտեցնել այդ տան հետ, վորը կարծես դիտմամբ շինված եր յերեխաններին տանջելու համար։ Բայց ուսուցչի խոսքերը միանդամից հանդստացրին ինձ, քանի վոր նա անմեղներին դահճի նման ջարդում եր, իսկ ինձ շաքար խոստացավ։ Յես իմ մեջ վճռեցի, վոր նա ինձ ձեռք չի տա։ Բայց աչք չեյի հեռացնում փայտերից, մանավանդ այն յերկար դագանակից, վորի ծայրը սենյակի ամենահեռավոր անկյունն եր հասնում։

Վերջապես յերեխաները մի քիչ հանդարտվեցին: Ուսուցիչը վերցրեց իր առաջ դրված փոքր դրատախտակներից մեկը, ինչ-վոր բան գրեց նրա վրա և ցույց տվեց հորս: Հայրս, վոր գրադետ եր, նայեց դրատախտակին և ասաց, վոր սխալ ե գրված: Ուսուցիչը վեճեց և չեր համաձայնվում հորս հետ, բայց հայրս ել իր կողմից չեր զիջում: Վերջիվերջո հայրս հաղթեց և ուսուցիչը դեն շարտեց տախտակի կտորն ու նեղացած ասաց:

— Դե վոր եղակս ե, դուք սովորեցրեք . . . :

Այդ որվանից հայրս ինձ համար շատ խոշոր մարդ դարձավ: Յես մտածեցի վոր նա ավելի ուժեղ և խելուք և նույնիսկ ուսուցչից ել, վորին յես ամենախմաստուն մարդն եյի համարում մեր զշաղղում: Այդ ինձ սրտապնդեց. յես մտածեցի, վոր հենց ուսուցիչը փորձի ինձ ձեռք տալ, կասեմ հորս և նա կըոթակի ուսուցչին:

Իսկ յեթե ուսուցչի խելքին փչեց զադանակ վերցնելու, հո՞ հայրս ել զադանակ ունի, վորոնցով քշում ե դոմեչներին: Են ահադին դոմեչներն ել չեն դիմանում հորս զադանակին, պարզ ե, վոր լղար, ծեր, փոքր գլխով ու կնճռոտված յերեսով ուսուցիչը շունչը կիշի հենց առաջին հարվածից:

Յերբ հայրս ուղղեց դրատախտակի վրա գրածը, ուսուցիչը ինձ հրամայեց նստել, ինքն ել նստելով ծալապատիկ, փոքրիկ դրատախտակը դրեց դերանին և ինձ ստիպեց կրկնել՝ «առ' լզու բիլլո՛» և «բիսմիլլո՛»*): Այդ յես վաղուց եյի սովորել հորիցս և համարձակ ու ժիր կրկնեցի բոլորը և վոչ մի անգամ չչփոթվեցի, չկակագեցի: Ուսուցիչը գոհ մնաց: Ինձ թվաց թե մյուս տղաներն ինձ նախանձով են նայում: Նրանք վախենում եյին ուսուցչի զավագանից, դլուխները վեր չեյին բարձրացնում և մատները աչքերի առաջ տնկելով գաղտաղողի իմ կողմն եյին ցույց տալիս: Յես մտածեցի, թե հենց վոր մենակ մնամ նրանք իրենց այդ մատներով իմ աչքերը կհանեն:

* «Առգու բիլլո» և «բիսմիլլո»—աղոթքների անուններ են:

Ուսուցիչը կարդաց աղոթքը, յերեխաներն ասացին «ամմեն»:

Այդ իմ ուսման սկիզբն եր:

Հայրս վերադարձավ տուն, իսկ յես մնացի այդ սարսափելի վայրում:

II

Ուսուցիչը ինձ նստեցրեց իրեն մոտիկ և հասակավոր յերեխաներից մեկին կարգադրեց պարապել ինձ հետ: Այդ տղան մատով ցույց տվեց դրատախտակին ու ասաց՝ «ալիֆ, բե, տե, սե»: Դրանք առաջին չորս տառերի անուններն եյին: Յես մինչեւ սերտելս կրկնեցի դրանք: Այն ժամանակ նա ինձ թողեց և զնաց ուրիշների հետ պարապելու: Յերեխաները այդ տղային կոչում եյին «խալիֆա՛» — ողնական:

Շուտով ուսուցիչը դուրս դնաց: Այն ի՞նչ իրարանցում եր, վոր բարձրացավ գպրոցում . . . : Բոլորը վեր թռան տեղերից, սկսվեց տուր ու դմփոցը, ուժեղները վեր գցեցին թռույլերին ու սկսեցին տրորել նրանց: Այդպես անցավ կես ժամ: Հանկարծ խալիֆան վեր թռավ տեղից, վերցրեց ուսուցչական յերկար գավազանը և սկսեց յերեխաներին անխտիր խիել: Յես վախեցա և ուղեցի փախչել գպրոցից: Բայց գուռը փակ եր և նրա ողի մեջ փայտ եր խրված: Ինձ նման յերեխաները առանց մեծերի ողնության չեյին կարող վոչ դուրս գալ վոչ ներս մանել:

— Տե՛զդ, թե չե գլուխդ կջարդեմ, — բղավեց ինձ վրա խալիֆան:

Յես վերադարձա տեղս, վիզս ծռեցի ու աչքիս պոչով զննեցի խալիֆային:

Գավազանը արագությամբ վերականգնեց կարգը: Յերեխաները նստեցին իրենց տեղերը: Այն ժամանակ խալիֆան գոչեց՝

— Տղե՛րք, իսկ հիմի նետ արձակենք աղեղներից:

Ուրախության վոռնոց բարձրացավ:

— Աղեղ, աղեղ, նետ ենք արձակելու ողերք...:

Յերեխաները դպրոցի հատակին փռված խսիրներից դուրս քաշեցին չոր ու հաստ ցողունները։ Ամեն մեկն իր գրպանից բարակ ու յերկար թել դուրս հանեց, կապեց ճիպոտից և ձգելով կորացրեց։ Ստացվեց մանկական փոքր աղեղ։ Յերեխաները բոնեցին այդ աղեղները ինչպես պահում են իսկական մեծ աղեղները, նետի տեղ մի ճիպոտ վերցրին, զրին թելի վրա, ձիգ տվին ու բաց թողեցին։ Ճիպոտներն իսկական նետի պես ոլացան։ Ելի սկսվեց կոփվը։ Ամեն մեկը նշան եր ըրունում մյուսի յերեսին, քթին, աչքին...։ Սկզբում կրովում եյին միայն մեկը մեկի դեմ, բայց հետո խալիքան նորից վերցրեց փայտը, խփեց յերեխաների գլխներին և գոչեց։

— Հիմի պետք է կովենք խումբը խմբի հետ։

— Խումբը խմբի հետ... աղաղակեցին յերեխաները։


Խալիքան բոլոր յերեխաներին բաժանեց յերկու խմբի և ամեն մի խումբը կանգնեցրեց մի պատի յերկարությամբ։ Խմբերից յուրաքանչյուրը բաղկացած եր յերկու շարքից—փոքրերը հետեւմ, մեծերը—առջեւում։ Իսկ ինքը՝ խալիքան կանգնեց պատի տակ, յերկու շարքի ծայրի կենտրոնում և հրահանդեց։

— Կրակ։

Ծարքերը զգաստացան, թելերը ձգվեցին և բոլոր աղեղներից միաժամանակ թուան նետերը։ Յերկրորդ շարքի փոքր յերեխաները խսիրից նոր ցողուններ եյին հանում և պատրաստում առաջավոր շարքի համար։

Հանկարծ ինչ-վոր մեկի նետը թուավ անցավ սենյակի մի ծայրից մյուսը և կաղավ յերեխաներից մեկի աչքին։

— Վա՛յ աչքս... վա՛յ, նանի ջան, աչքս... գոչեց տղան և դուրս փախավ շարքից։ Այդ դեպքից հետոնրա ընկերներն ավելի գաղաղեցին։ Նրանք սկսեցին զզդրված խսիրի ճիպոտները վերցնել և չպրտել իրենց հակառակորդների վրա։ Մյուս շարքը պարտքի տակ չնը



մնում, և ճիպոտները թափով յետ ելին գալիս: Ամբողջ սենյակը լցված եր փոշիով, աղբով, չոր ճիպոտներով... Յես վախեցա, վոր ինձ վոտների տակ տրորեն, մտա ուսուցչի տեղն ու փայտի նման կանգնեցի այնտեղ:

Կոխվը շարունակվում եր... Բայց ահա դուռը հանկարծ ուժգին հրեցին: Մեկը վոտքերով վրդովված հարվածում եր դրսից և յես մտածում եյի, թե հիմի ուր վոր և դուռը կջարդվի...:

Կատվի մլավոցը լսած մկների պես, յերեխաները թուան իրենց տեղերը և թաղնվեցին գերանների հետև, իրենց ախոռներում: Բայց գերանները ցած եյին և չեցին ծածկում նրանց: Նրանք ծոեցին գլուխները, ծածկեցին դեմքերը գերանների հետեւում և այդ «գիրքերի» հետեւից միայն նրանց կորացած մեջքներն եյին յերեւում:

Դուռը շարունակում եյին ծեծել: Բայց վոչ վոք չեր համարձակվում բացել: Վերջապես, յերբ բոլորը սոկվեցին իրենց ախոռներում, խալիֆան բացեց: Ներս ընկալ ուսուցիչը: Կատաղությունից նրա բեխերն ու մորուքը բիզ-բիզ եյին կանգնել, ինչպես շուն տեսած կատվի մազեր, իսկ աչքերը քիչ եր մնում, վոր դուրս պրծնեն իրենց բներից:

Ուսուցիչը սենյակն ընկնելուն պես խլեց խալիֆայի ձեռքի փայտը և մի տասը-տասնյերկու անգամ հարվածեց նրա գլխին: Խալիֆան վագվզում եր սենյակում, ուրիշի խաղողի այգին մտած և այգեպանին պատհած շան պես: Բայց ուսուցչի յերկար դադանակը հասնում եր նրան սենյակի բոլոր անկյուններում ել և շրխկում եր նրա գլխին:

Քանի գեռ ուսուցիչը ծեծում եր խալիֆային նրա զայրույթը մի փոքր իջավ: Նա մտավ իր ախոռը, տեսավ ինձ այնտեղ և ուղարկեց իմ տեղը: Բայց և այնպես այս անգամ ել նա ինձ ձեռք չտվեց, այլ նորից վերցրեց դադանակը և սկսեց հարվածել յերեխաների կորացած մեջքներին: Ամեն անգամ փայտը ցած իջնե-

Դուց համարյա տասը յերեխայի միանգամից եր դիալ-
չում և նրանք միաբերան աղաղակում եյին.

— Ել չեմ անի, վարժապետ ջան...

Վերջապես ուսուցիչը բոլորովին հանգարավեց և
ասաց.

— Կարդացեք:

Յերեխաները ծեծլած, մեջքները քորելով կռացան
դրբերի և գրատախտակների վրա և աչքների տակով
ուսուցչին գողեղող նայելով սկսեցին կարդալ բարձր,
ամբողջ կոկորդներով մեկ։ Յես նույնպես կռացա իմ
տախտակի կտորի վրա և բղավեցի՝ «ալի՛ֆ, բե, տե,
մե...»։

Ուսուցիչը խալիֆային կանչեց իր մոտ։ Սա առանց
վորեե վախի մոտ յեկավ։ Յես շատ զարմացա խալի-
ֆայի քաջության վրա և իմ մեջ ել ցանկություն ա-
ռաջացավ այնպես անվախ լինել, ինչպիսին նու յե։
Բայց հենց այդտեղ ել մտածեցի, յեթե բան ե յես ել
նրա պես արիասիրտ տղա դառնամ, ել ինչ ուզում ե
լինի, ուսուցչից չեմ փախչի, ինչպես խալիֆան եր
փախչում, դադանակը կիսեմ նրա ձեռքից և կհասցնեմ
հենց իր գլխին։

Ա՛խ, ափսոս, վոր փոքր եմ ու սիրտս լցված ե ո-
ւով...։

Ուսուցիչն ասաց 'խալիֆային.

— Դե՛, ասա տեսնեմ, ո՞վ ե սարքել այս աղքուկն
ու կոխվել։

Յերեխաները ընդհատեցին ընթերցումն ու ահով
լարեցին լարությունները, տեսնեն խալիֆան ում ա-
նունն ե տալիս։ Բայց ուսուցիչը նորից վերցրեց փայ-
տը և ստիպեց նրանց կարդալը շարունակել։

Յերը խալիֆան թվեց բոլոր մեղավորներին, ու-
սուցիչը գոռաց՝ «լոե՛լ»։ Յեկ յերեխաներն անմիջապես
լրեցին։

Մեղավորները մեկը մյուսի հետեւից կանչվեցին։
Յերը ուսուցիչը սխալվում և կանչում եր մի անմեղի,
խալիֆան ուղղում եր.

— Զե, դա չի, այ ե՛ն...—և ցույց եր տալիս մի
ուրիշի:

Այդպես, ուսուցչի առաջ հավաքվեցին տասը կամ
տասյերկու յերեխա։ Նրանք բոլորն ել մեծահասակնե-
րից եյին։

— Դուռը փակի՛ր։

Խալիֆան ծածկեց դուռը և փայտն անցկացքեց ողի
մեջ։

— Վերցրո՛ւ Փալախկան։

Յես առաջ ել լսել եյի Փալախկայի մասին, բայց
դեռ չեյի տեսնել այդ սարսափելի բանը։

Խալիֆան վերցրեց ուսուցչի գլխավերելը, պատից
կախված փայտը։ Փայտը մոտ մեկ և կես արշին յեր-
կարություն ուներ և մի քիչ ծռված եր։ Նրա յերկու
ծայրերից պարաններ եյին կապված։

Այդտեղ յես առաջին անգամ իմացա թե ինչ բան
և Փալախկան։

— Ահմեդ, դու դարձյա՞լ կոխվ ես արել, — հարց-
րեց ուսուցիչը իր առաջ կանգնած մեղապարտներից մե-
կին։

— Վարժապետ ջան, ների, յես չեմ արել, եղ հո
Մուհամմեդն եր, — պատասխանեց յերեխան։

Սակայն ուսուցիչը վոչ մի ուշադրություն չդարձ-
նելով նրա ճիշերի վրա, հրամայեց նրա մոտ կանգնած
յերեխաներին։

— Պառկեցրեք։

Ահմեդին պառկեցրին։ Առանց հապաղելու նրա
վոտքերից կապեցին Փալախկայի պարանները։ Յերկու
յերեխա բռնեցին Փալախկայի ծայրերից և սկսեցին
պտտեցնել։ Պարանները ավելի ու ավելի ամուր վոլոր-
վեցին, ձգվեցին և սկսեցին կարել յերեխայի բորիկ
վոտները։ Ահմեդը գոռում եր.

— Վա՛յ մեռա... Վա՛յ ձեղ մատաղ վոտներո...։

Յերեխաները դադարեցին կարդալուց և վախից
դողալով սկսեցին ականջ դնել նրա ճիշերին։ Բայց ու-
սուցիչը դործի գրեց իր դադանակը և նրանք նորից

սկսեցին բղավելով կարդալ իրենց դասը։ Ապա ուսուցիչը վերցրեց յերկրորդ փայտը, վորը յերկու արշին յերկարություն կունենար, և մեկնեց խալիֆային ու հրամայեց։

— Խփի՛ր։

Խալիֆան սկսեց անողորմ կերպով հարվածել Ահմեդի վոտնատակերին, իսկ վոտքերը անց ելին կացված Փալախկայի մեջ և յերկու տղա ամուր բռնել ելին։ Ահմեդը նորից ճչաց։ Բայց նրա ձայնը գրեթե չերլսվում, վորովհետեւ նրա չըջապատռում յերեխաներն ամբողջ ուժով դռվում ելին։

Փողոցով անցնողները հավանաբար չելին ել գլխի ընկնի, վոր դպրոցում վորեւ մեկին ծեծում են։ Նրանց միայն սովորական բարձրածայն ընթերցանության ձայներ ելին լսում։

Խալիֆան այնքան հարվածեց, վոր Ահմեդի կըրունկներից դուրս ցայտեց արյունը։ Այն ժամանակ ուսուցիչն ասաց։

— Հերի՛ք ե։

Խալիֆան դադարեց խփելուց։ Ֆալախկան հանեցին վոտքերից։ Ահմեդը չարությամբ նայում եր խալիֆային։

— Վերցրե՛ք Մուհամմեդին, — ասաց ուսուցիչը։ Յերեխաները վայր գլորեցին Մուհամմեդին, վոտքերին հագցրին Փալախկան և վոլորեցին պարանը։ Խալիֆան սրան ել այնքան ծեծեց, մինչև վոր մեղավորի կըրունկների վրա արյուն յերևաց։ Այդպես պատժվեցին բոլոր տասնյերկու յերեխաներն ել։ Յես նրանց բոլորին ել շատ եյի խղճում։ Նրանցից վոչ մեկն ել խաղի պատճառ չեր յեղել, բոլորը սարքողը ինքը՝ խալիֆան եր, և հենց նա ել ընկերներին ուսուցչի ձեռքը տվեց։ Յես շատ եյի ուզում ասել այդ բանն ուսուցչին, բայց վախենում եյի խալիֆայից։

Այնուամենայնիվ ուսուցիչն առանց ինձ ել գլխի ընկավ, թե ով ե գլխավոր մեղավորը։ Յերբ բոլոր

կանչվածներն ել ստացան իրենց պատիժները, նա նոյն կալիֆային և ասաց.

— Յես գիտեմ, վոր այս բոլորը քո՛ սարքած ոյիններն են։

Նա շուռ յեկավ գեղի պատժված յերեխաները, վորոնք գեռես կանգնած ելին նրա առաջ։ Հարվածներից մոմբում ելին նրանց կըրունկները և խեղճ յերեխաները շուտ-շուտ վոտքերը վոխում ելին։

— Դեռ, մի շուռ տվեր սրան տեսնեմ, — ասաց ուսուցիչը։

Յերեխաները կարծես հենց դրան ելին սպասում։ Նրանք գլորեցին խալիֆային, վրա թափվեցին, վոտքերին Փալախկա հագցրին և սկսեցին վոլորել։

— Վա՛յ, շատ միք հուփ տալ, — դուռաց խալիֆան, — վայ վոտներս կպոկեք կամաց ։

Ո՞վ եր լսողը։

Ուսուցիչը յերեխաներից մեկի ձեռքը մի նոր փայտ տվեց։ Սա փայտն ստանալուն պես սկսեց հարվածել խալիֆայի կըրունկներին։

— Վա՛յ, — բղավեց խալիֆան, — վոնց կուզեք իւլիկեցեք, համա Փալախկան եղաղես պինդ միք պտտի։

Բայց յերեխաները վոլորում ու ավելի և ավելի ելին ձգում պարանները։

Յերբ տղան մի քանի անգամ հարվածեց խալիֆայի կըրունկներին, ուսուցիչը դարձավ մի ուրիշ յերեխայի և ասաց.

— Հիմի ել դու վերցրու փայտը, թող քո պարտ չմնա մինչև ահեղ գատաստանի որը։

Հետո գավազանը յերբորդ յերեխան վերցրեց, հետո չորրորդը, չինգյերորդը, վեցյերորդը։ Այդպես բոլորը, ում խալիֆան խփել եր, տվին իրենց պարտքը, գեռ մի բան ել ավել։

— Դեռ ուրեմն, հերիք ե, — ասաց ուսուցիչը։

Բայց և այնպես յերեխաները դեռ բաց չելին թողնում Փալախկան։

— Ել ինչ եք ուզում, — սիրտներդ չհովացա՞վ, —
Հարցրեց ուսուցիչը:

— Ա՛ղ, — ասաց նրանցից մեկը:

— Ճիշտ ե, աղ... — կրկնեց ուսուցիչը և իր
գրպանները պտրտեց: — Ինձ մոտ աղ չկա, ճեղանից
մեկն ու մեկի մոտ չկա^Բ:

Բոլոր պատժվածները ակը տվին իրենց գրպան-
ները: Յերկու թե յերեք հոգի գրպաններից լաթի կը-
առորներ հանեցին, վորոնց մեջ աղ կար կապած:

— Տրորեցե՛ք, — կարգադրեց ուսուցիչը:

Յերեխաններն սկսեցին աղով արորել Խալիֆայի
ճաքճքված և արյունլվա կրունկները:

Խալիֆան գոռում եր հորթի նման:

— Հերի՛ք ե, — ասաց ուսուցիչը:

Ֆալախկան քանդեցին: Խալիֆան կաղալով և
թեփով աչքերի արցունքը որբելով յերերում եր տե-
ղում:

— Սո՛ւս, — ասաց ուսուցիչը. գառնալով այն յե-
րեխաններին, վորոնք դեռ շարունակում եյին ճղավել
վողջ կոկորդով:

Յերեխանները լոեցին:


— Վաղը ամեն մեկդ ութ փուլի*) կրերեք խսիրնե-
րի դիմաց: Բոլոր խսիրները փչացրել եք այսոր:

— Կրերենք, կրերենք, — խմբով պատասխաննեցին
յերեխանները:

— Աղատ եք, — ասաց ուսուցիչը:

Յերեխանները, բազեյի ճանկերից ազատված ճշնձ-
դուկների նման, անմիջապես վեր թռան տեղներից
նետվեցին դեպի դուռը: Բայց դուռը դեռ փակ եր: 292
Վերջապես խալիֆան վեր կացավ տեղից, կաղալով
մոտեցավ դռանը և բացեց: Առաջինը նա դուրս յե-
կավ, նրա հետեւյ իրար հրմշտելով և վայր ընկնելով
դուրս թափվեցին մյուսները: Յես բոլորից հետո

* Փուլ, փուլի—պղնձե փոքրիկ դրամ, արժեք մոտ քառորդ
կոպեկ:



դուրս թափվեցին մյուսները։ Յես բոլորից հետո
դուրս յեկա:

Յերեխաները խոնվել եյին դպրոցի բակում։ Խա-
լիֆան նայեց նրանց և ասաց.

— Գնաք բարով։

— Դու ել գնաս բարով, — խմբով պատասխանե-
ցին նրանք։

Յերեխաները ցրվեցին։ Սակայն դպրոցի յետեվ
մի անկյունում յես տեսա մի քանի մանուկների, վո-
րոնց այսոր ծեծել եյին։ Նրանց մեջ կանդնած եր նաև
խալիֆան։

— Պատրաստվեցեք, վոր եղուց գնդակ ենք խա-
ղալու և լորերին կովացնելու յենք։

— Լավ, կպատրաստվենք, — պատասխանեցին
յերեխաները և ցրվեցին իրենց տները։

Մինչև վաղը մենք ազատ եյինք դպրոցից։ Իմ
վողջ կյանքում յես յերկու անգամ եմ ազատություն
ստացել։ 1917 թվին, յերբ քառասուն յերկու տարե-
կան եյի, ճիպոտի յոթանասունհինգ հարված ուտե-
լուց հետո դուրս յեկա Եմիրի բանտից, դա յերկրորդ
ազատությունն եր իմ կյանքում։ Իսկ առաջին ազա-
տությունը յես զգացել եմ վեց տարեկան հասակումս,
յերբ առաջին պարապմունքից հետո դուրս յեկա դըպ-
յեղա։

III

Յես վերադարձա տուն և մորս տեսնելուն պես լաց
եղա։

— Ինչ ե պատահել, բալիկ, ինչի ես լաց լինում,
հարցրեց մայրս, բայց յես վոչինչ չկարողացա պա-
տասխանել։ Վերջապես հայրս յեկավ։

— Դե, ասա մի տեսնեմ ինչ ե պատահել, — խստու-
թյամբ հարցրեց նա, — ասա՛, թե չե ականջներդ կկըտ-
րեմ։

Յես հեծկլտանքով պատասխանեցի՝

— Են լակոտները կոիվ զցեցին... իրար հետ...:
— Դե վոր իրար հետ կռվեցին, քե՞զ ինչ: Դու կը-
ոիվ չես արել, քեզ ել վոչ վոք չի ծեծել, ել ինչ եւ-
լաց լինում:

— Դոմալլոն նրանց ծեծեց...
— Շատ ել լավ ե արել: Կռվարարներին կծեծեն:
— Յես ել դպրոց չեմ դնա:
— Հիմարություններ են. —խստությամբ ասաց
հայրս: Ապա մի քիչ լոկուց հետո հարցրեց.

— Իսկ ինչի չես դնա:
— Դոմալլոն ինձ կծեծեի:
— Նա իրավունք չունի, նա չի համարձակվի ծե-
ծել: Յեթե ծեծեի' յես նրա ականջները քոքից կկտրեմ:
Յեվ հայրս գրպանից հանեց դանակն ու ցույց տը-
վեց ինձ:


— Տե՞ս, ահա՛: Յեթե Դոմալլոն ծեծեի քեզ, հենց
ես դանակով եմ կտրելու նրա ականջները:

Յես ուրախացա և պատկերացրի ուսուցչիս ականջ-
ները կտրած ու նույնիսկ մտածեցի՝ «շատ լավ, թող
եղակես լինի, թող նա մի ինձ ծեծեի': Հորս կասեմ կդնա
դպրոց և տեղն ու տեղը կկտրի ականջները: Են ժա-
մանակ զե արի ու թամաշա արա ուսուցչիս....»

Մինչեվ այժմ կյանքումս ինձ վոչ վոք չի ծեծել,
բայց յերբ պատկերացրի, վոր ուսուցչիս գավազանը
կարող ե «չոյել» կրունկներս, վոտներիս տակերն
սկսեցին քոր գալ ու այրվել:

Յեվ այնուամենայնիվ յես շատ եյի ցանկանում
տեսնել ուսուցչիս առանց ականջների: Մեր հարեւանին
անականջ մի եշ ուներ: Ամեն անդամ, յերբ տեղը հեծ-
նում եր նրան ու քշում, յերեխաները ծափ եյին զար-
կում և հետեվից գոռում.

— Անականջ եշ... եշ անականջ...:
Ինձ համար ել զվարճալի յեր տեսնել, թե ինչպես
են ձեռ առնում ու ջղայնացնում մեր հարեւանին: «Ա՛ի
թե մեր ուսուցիչը կմնա առանց ականջների», —մտա-
ծեցի յես, — են ժամանակ յերեխաներն ել եսորվա-



նման կոիվ չեն անիլ, քանի վոր ամբողջ ժամանակ
մտիկ կանեն ուսուցչի ականջներին ու կուրախանան»:
Յեկ յես ասացի հորս.

— Թե վոր ուզում ես դպրոց գնամ, հենց հիմիկ-
լանից կտրի ուսուցչի ականջները: Կկտրես— կդնամ,
չե՞ս կտրի — չեմ գնա:

Հայրս պատասխանեց.

— Իսկ յես իշխ քուռակը չեմ տա քեզ:

Այդտեղ յես նայեցի հորս ու ասացի.

— Շատ լավ, թող այդպես լինի. յեթե դու ինձ
կտաս քուռակն իր լծասարքով — դպրոց կդնամ...:

— Լավ, բալա՛ս, — ծիծաղեց հայրս, — միայն թե
լաց մի լինի ու ինելոք դպրոց գնա, — բոլորը կնվիրեմ:
Քուռա՛կ... ա՛յ, յեթե նրա վզին ժապա-
վեն կապեմ և զանդակն ու բոժոժներն ել կախ տամ,
մի տեսեք ի՞նչ սիրուն բան դուրս կդա:

Նստիր նրա վրա, իսկ նա ականջները ցցած առաջ
կուլանա: Կարծես իշով չես դնում, այլ թոչում ես ո-
դում, ամպերի միջով...:

Յես այնպես տարվեցի իմ իշուկով, վոր մոռացա
դպրոցում տեղի ունեցած բոլոր անախորժությունները:

Յես սրբեցի աչքերս, մի կտոր հաց վերցրի և զուրս
յեկա բակ: Մի ուռ կտրելով յես ձիավորի նստեցի ցե-
խաշեն ցածլիկ ցանկապատի վրա: Զեռքիս ճյուղը
ժարակ դարձավ, իսկ պատը՝ իշուկ:

— Դե՛, հոչ, հո՛չ... — քշեցի յես պատին:

Ցանկապատն ի հարկե տեղից չշարժվեց, բայց
ինձ թվում եր, վոր յես առաջ եմ սլանում և սիրու-
լովում եր ուրախությամբ:

IV

Մյուս որը առավոտյան յես դպրոց գնացի շատ վաղ,
յերբ ուսուցչից բացի գեռ վոչ վոք չկար այնտեղ: Յես
բարեվեցի նրան և ուզում եյի տեղս նստել, բայց ու-
սուցիչը կանգնեցրեց ինձ և հարցրեց.

— Խսիրի փողը լերե՞լ ես:

— Վոչ, մոռացել եմ . . .

— Այդ վո՞նց ես դու գիտուն դառնալու, դու, վոր մոռացել ես, թե հարկավոր ե խսիրի գինը տալ: Ես ըռպեյիս վազիր հորդ մոտ փողը բեր:

Յես իմ տախտակի կտորը դրի գերանի վրա և դուրս վազեցի: Բայց դեռ չեյի հեռացել, յերբ ուսուցիչը կանչեց հետեւիցս.

— Սաղբեղդի՛ն:

Յես վերադարձա և կանգնեցի նրա առաջ:

— Զեռքերդ ծալիր, — ասաց նա դժուհ ձայնով:

Յես կատարեցի նրա հրամանը — ձեռքերս ծալեցի փորիս վրա, բայց չգիտեյի այնպե՞ս եմ անում, ինչպես վոր պետք ե, թե՞ այլ կերպ են ծալում: Նա ձեռքը մեկնեց դեպի դազանակը: Յես վախեցա ու մտածեցի թե ուր վոր ե հիմի կսկսի ծեծել և ճշացի.

— Ինձ ձեռք տվիր թե չե հերս ականջներդ կկտրի: Ուսուցիչը ծիծաղեց և ասաց.

— Վոչ, յես քեզ ձեռք չեմ տա: Յեթե չարություն չանես յես յերբեք քեզ չեմ ծեծի:

Նրա ծիծաղը սրտապնդեց ինձ, և սկսեցի սպասել նրա նոր հրամաններին: Նա կարծ գավազանները տվեց ինձ և ասաց.

— Առ տար շպրտիր մեշետի մոտի ավազանի մեջ ու գնա հորդ մոտ փողը բերելու:

Ուսուցչի ծիծաղից, մեկ ել այն բանից, վոր դըպոցում այլևս դավազաններ չեն լինելու, յես ուրախացա: Այնպես վազեցի, վոր վոտքերս հազիվ եյին դետին առնում: Նախ փայտերը ավազանը զցեցի, ապա վազեցի տուն: Հայրս տաշում եր ջրազացի ակը: Յես նրանից փող ուղեցի:

— Ինչքա՞ն ե հարկավոր:

— Ութ փուլի:

Հայրս պտրուց դրազանները և ութ հատ պղնձյա փուլիներ հանձնեց ինձ: Յես դուրս վազեցի արհեստա-

նոցից, բայց կես ճանապարհից յետ դարձա և ասացի Հորս.

— Դոմալլոն եսոր ուրախ ե, նա ասում ե՝ յես քեզ չեմ ծեծելու և նույնիսկ փայտերն ինձ տվեց, վոր ջուրը դցեմ:

— Լավ, լավ, դնա սովորի, — պատասխանեց հայրը:

Յես վազելով վերադարձա դպրոց: Մյուս աշակերտներն արդեն այնտեղ եյին:

Ուսուցիչը սկսեց հավաքել դրամները: Յես ուզեցի Հորս տված փողերը հանձնեմ ուսուցչին, բայց հիշեցի, վոր ձեռքերը պետք ե կրծքի վրա պահել: Յես ձեռքերս ծալեցի կրծքիս և ցույց տվի դրամները: Նա նորից ծիծաղեց:

— Փառք ալլահին, հիմի վոր քաղաքավարի տղա ես դառել: Բայց յերբ փող ես տալիս, կարող ես և ձեռներդ չծալել:

Այդտեղ յես բոլորովին համարձակ դարձա և աջ ձեռքովս դրամը մեկնեցի ուսուցչիս, բայց ձախ ձեռքս առաջվա նման թողեցի կրծքիս վրա:

— Աստված որհնի քեզ, զորանաս, գիտնական կղառնաս, — ասաց ուսուցիչը, վերցրեց դրամներն ու սկսեց աղոթք կարգալ:

«Ինչպես յերեսում ե մեր ուսուցիչն ենքան ել վատ ժարդ չե, — մտածեցի յես ինքս ինձ, — փայտերը դեռ զցել տվեց, նույնիսկ ինձ համար աղոթեց ել, թեև յես փողը նրան տվի վոչ թե աղոթքի, այլ խսիրի գիշաց»:

Ուսուցիչը նորից զբաղվեց խսիրի գինը հավաքելու գործով: Ով առանց դրամի եր յեկել նա տուն եր ուղարկում: Մի քանի յերեխաներ յերկրորդ անգամ դատարկածեն վերադարձան և ասացին ուսուցչին, վոր իրենց հայրերը խոստացել են առաջիկա բազարի որը տան:

— Դե, վոր այդպես ե, յես ել նոր խսիրներ չեմ առնի ձեզ համար, մինչև վոր բոլորը փողը չըերեն: Իսկ հին խսիրները վառել եմ տալու: Ուրեմն սրանից հետո

չոր գետնին կնսառք ու կտեսնեմ ել ինչով եք խաղա-
լու:

Այդ խսաքի վրա իրենց բաժինը վճարած յերեխա-
ները սկսեցին հրմանութել նրանց, ովքեր չեն վճարել
խսիրների գինը:

— Հերդ ութ փուլիի համար մեռնո՞ւմ ե, ինչ ե:
Դե, վազիր բեր:

Յես նույնպես բարկացա այդ յերեխաների վրա և
մտածեցի, վոր նրանց հայրերը ժշատ ու աղահ կլի-
նեն:

Բայց չե՞ վոր այն ժամանակ ութ փուլին քիչ փող
չեր: Հիշում եմ, մի անդամ մեղ մոտ հյուրեր յեկան,
հայրս իմ ձեռքը մի տոպլակ տվեց և մի թանգու —
իսկ թանգուն վաթսունչորս փուլի յեր — և ինձ ուղար-
կեց բրնձի վաճառական Շարիֆ-բեդի մոտ:

— Փողը կտաս իրեն, իսկ նա տոպլակդ յերկու
չափ բրինձ կլցնի, — պատվիրեց հայրս, — միայն տե՞ս,
նրան չասես թե մենք շիրբիրինջ*) ենք յեփելու, թե չե
վատ բրինձ կտա: Յեթե հարցնի թե ինչ ենք յեփելու,
ասա ոչ**) ենք յեփում, իսկ թե ինչ ոչ — չասես:

Յեթե այդ ժամանակ վաթսունչորս փուլիին տալիս
եյին յերկու չափ, այսինքն չորս կելու լավ բրինձ,
դուրս ե զալիս, վոր ութ փուլիով կարելի յեր կես կի-
լու բրինձ առնել: Ուրեմն քիչ փող չեր ուսուցչի ուղա-
ծը:

Ուսուցիչը դեռ յերկար ժամանակ հավաքում եր
պղնձե գրամները և վիճում եր յերեխաների հետ: Վեր-
ջապես նա ասաց.

— Վեր կացեք, նախաճաշի ժամանակ ե:

Բոլորը աղմուկով վեր թուան տեղներից, դուրս

* Շիրբիրինջ — բրնձով քաղցր կաթնապուրի նման կերա-
կուր ե:

**) Ոշ — տաճկաստանցիք ասում են առհասարակ ուստելիքին և
մասնավորապես իրենց սիրած կերակուրին — փլավին: Դրանից
ել ողավել ե Սալրեղդինի հայրը, վորպեսզի վոչ ստի, վոչ ել
ձիշտն ասի:

վազեցին դռներից և, ինչպես յերեկ, հրաժեշտ տվին
խալիֆային, ցըլեցին իրենց տները:

Յես նույնպես ուղեգործեցի գեղի տուն: Կերա,
մի քիչ խաղացի իմ փիսիկի հետ և նորից վերադարձա-
դպրոց: Ուսուցիչը դեռ այնտեղ եր, յերեխաներն ել
մեկիկ-մեկիկ հավաքվում եյին:

— Կարդացե՞ք, — ասաց ուսուցիչը, յերբ բոլորը
հավաքվել եյին և բարձրացըեց իր յերկար մահակը:
Բոլորը միասին գոռդուացին: Յես նույնպես սկսեցի
գոռալ՝ «Ալիֆ, բե, տե, սե...»:

— Դաս տո՛ւր, — գարձավ ուսուցիչը խալիֆային:

Խալիֆան յերեկվա հարվածներից կաղալով հերթով
մոտեցավ յերեխաներին և դաս տվեց: Ինձ հետ այս
անդամ ինքը՝ ուսուցիչը պարապեց: Նա ինձ նստեցրեց
իր գիմացը, գրատախտակը դրեց առաջս և ասաց.

— Դեհ, կարդա դասդ:

— Ալիֆ, բե, տե, սե, — գատասխանեցի յես ա-
ռանց գրատախտակին նայելու:

— Ուղիղ ե, վառք ալահին, — ասաց ուսուցիչը
և իմ գրատախտակին մի քանի նոր տառեր ել գրեց.
Իսկ հետո ասաց ինձ.

— Հիմի կարդա ներքեկում գրածները, ասա ջիմ,
խե:

Յես նայեցի ուսուցչիս թոշնած ու կեղտոտ դեմքին,
նրա անփայլ ու արտասվակալած աչքերին, այծի մո-
րուքին, վորը նրա խոսելու ժամանակ տմբամբում եր,
և նրա հետեւից կրկնեցի այդ նոր տառերի անուննե-
րը: Յերբ այդ տառերը կրկնեցի մի քանի անդամ, ու-
սուցիչը հրամայեց.

— Դե, հիմի ինքու կարդա:

— Ալիֆ, բե, տե, սե. — կարդացի յես:

— Վոչ, — ասաց նա. — ներքեկինը կարդա:

Բայց յես չգիտեյի թե վորոնք են վերեվինը և վո-
րոնք են ներքեինը: Յես ձեռքերս փորիս վրա ծալած
կանգնել ու նայում եյի ուսուցչին:

— Ասում եմ ներքեինը կարդա, — խստությամբ

Կրկնեց ուսուցիչը։ Այդ պահին նա ինչ վոր քան եր գրում թղթի վրա։ Հետո նա թուղթը դրեց հասա թղթապանակի մէջ, նայեց ինձ վրա, մի պահ լռեց և ասաց։

— Յերեսում ե, վոր դու դմբո յերեխա ես։ Յես այսքան հալում եմ գլուխդ լցնում, իսկ դու վոչինչ չես հասկանում։

— Ինչն եք հալում, —միամտաբար հարցրի յես։
— Զիմը, գենը, խենը։

— Եղ հո յես ել պիտեմ, — ասացի յես և արագ կրկնեցի ջիմ, գե, խե... Դա հո յես լավ գիտեմ։ Յես մենակ չդիտեմ թե վորոնք են ներքենինը։


— Զիմը, գենը, խենը, հենց ներքենն են, փառք ալահին։ Գնա տեղդ նստիր ու դասիդ նայիր։

Նստեցի ու սկսեցի կրկնել՝ «Ջիմ, գե, խե, ջիմ, գե, խե», իսկ ուշքու ուսուցչի կողմն եր, առանձնապես շատ եյի նայում նրա այծի մորուսին։

Առաջ մենք մի այծ ունեյինք։ Ամառը յես արածացրի նրան և նա շատ չաղացավ։ Բայց ահա յեկավ դաժան, ձմեռը, առուներն ու գետակները ծածկվեցին սառուցով։ Զրադացները չեյին աշխատում և վոչ վոք չեր գնում հորս շինած ակները։ Յերկու ամիս շարունակ մենք փող չունեյինք միս առնելու։ Այն ժամանակ հայրս վորոշեց մորթել այծին։ Յես շատ եյի խղճում այծին, լաց յեղա և խնդրեցի ձեռք չտալ նրան։ Բայց հայրս չսեց ինձ, դանակը սրեց, այծին ցած գլորեց և կապեց նրա վոտները։ Մայրս բռնեց այծին, վոր չթփրտա, իսկ հայրս կտրեց նրա վիզը։ Այծը մեռավ, աչքերը կիսով չափ խփվեցին, իսկ մոռուսը տնկվեց վեր։ Յերբ ուսուցիչը լուս ե, նրա մոռայծի մորուսն եր։

Բայց հենց վոր հիշեցի մեր այծի մասին, շատ աըխրեցի և արցունքի միջից կրկնեցի՝ «Ջիմ, գե, խե, ջիմ, գե, խե»։

Այդ պահին մեկը ծեծեց այն դուռը, վորի մոտ նստած եր ուսուցիչը։



— Ո՞վ է, — հարցրեց ուսուցիչը թղթե լուսամուտը
բացելով։ Դուն հետևում Փաբանջան հադին և մազե-
ցանցը գեմքին քաշած մի կնոջ կերպարանու յերեաց։
Նա ուսուցչին մի արծաթյա դրամ մեկնեց և ասաց.

— Վերցրեք այս փոքրիկ զոհարերությունը և ա-
ղոթքներ տվեք գլխիցալի, ատամի ցավի, աչքերի
ցավի և ծննդաբերության ցավերի դեմ և բաց թողեք
յերեխաներին։

— Մի թանգայի դիմաց չորս աղոթք։ Դեռ յերե-
խաներին ել բաց թողնեմ։ Զե՛, այդպես չի լինի, բան
չի դուրս գա, մի թանգա ել տվեք, — ասաց ուսուցիչը։

— Յես հեռու տեղից եմ յեկել, Որկենից, — պատաս-
խանեց կինը, — ինձ ձեզ մոտ ե ուղարկել Շարոֆ-Բայը,
նրա կինը շատ և տանջվում, չի կարողանում ծնել։ Ու-
րիշ հարեվան կանայք ել են աղոթք պատվիրել։ Նրանք
ասացին, վոր փող կճարեն, հարկից կթեթեվանան և
ելի՛ կուղարկեն։ Դուք տվեք աղոթքները, իսկ յերբ
նրանք կհավաքեն դրամը, յես ինքս կրերեմ։ Յեվ, աս-
ծու սիրուն, յերեխաներին ել բաց թողեցեք։

Ուսուցիչը դրամը դրամնը խոթեց, առաջն ընկած
հաստ թղթապանակից չորս կտոր թուղթ հանեց և
տվեց կնոջը։

— Վո՞ր աղոթքը, վո՞ր հիվանդության դեմ ե, —
հարցրեց կինը։

— Ամեն աղոթքն ել ամեն հիվանդության կտրում
ե, — պատասխանեց ուսուցիչը, — դրանցից վորն ել վոր
տալու լինեք հիվանդին՝ կլավանա։

Կինը վերցրեց աղոթքները և գնաց, իսկ ուսուցիչը,
«ասծու սիրուն» բաց թողեց մեզ։

Իսկ մյուս առավտոյան, հենց նախաճաշից առաջ
դպրոցի դռներին մոտեցավ մի ձիավոր։

— Դոմալլո, դոմալլո, — ձայնեց նա ուսուցչին։
Առանց դպրոցից դուրս դալու և նույնիսկ դուռն ա-
ռանց բացելու ուսուցիչը դոչեց։

— Հա՛, ինչ եք տվում։

— Որկենայում մարդ եմեռել, Շարոֆ-Բայի կնի-

կը մեռել ե,— գոչեց ձիավորն ու ձին քշեց մի այլ
ուղղությամբ:

Ուսուցիչը մռայլվեց: Զգիտես ինչու նա դիմից
վերցրեց չալման և դրեց գետնին:

— Ձեր աղոթքը անտեղի անցավ, դոմալլո, Շա-
րաֆ-Բայի կինը մեռավ, հը՝,— ասաց նրան խալիֆան
ծաղրական ժպիտով:

— Սրբապղծություն մի' անի, —ընդհատեց նրան
ուսուցիչը, — անողուտ աղոթքներ զոյություն չունեն,
կինը իր անհավատությունից ե մեռել: Յեթե նա հա-
վատ և հույս եր ունեցել — կառողջանար: Ասված է՝
«Հավատա և կփրկվես»: Դե գնացեք նախաճաշի, —
չուր յեկավ նա դեպի մեզ և զուրս յեկավ:

Յերեխաները տուն վագեցին ճաշելու, յես ել գնացի:

Մի ժամ անց յես վերադարձա դպրոց:

— Յերեխեք, յեկեք պայման կապենք, — ասաց
խալիֆան:

— Ի՞նչ պայման, —հարցրինք խմբով:

— Ինչ ել վոր պատահի խաղի ժամանակ, թող վոչ-
վոք չգանդատվի ուսուցչին:

— Առաջ մի դու դադարի դանդատվելուց, — ասաց
մեծ տղերքից մեկը:

Դեռ յերկու որ առաջ եր, վոր խալիֆան մատնեց
այդ տղային և նա տեսավ ուսուցչի դադանակի համը:


— Իսկ հիմի վոչ դուք դանդատվեցեք և վոչ ել
յես եմ գանդատվելու, — ասաց խալիֆան:

Հետո նա նայեց ինձ:

— Դու ել հորդ վոչ մի դեպքում վոչինչ չասես, —
բու հայրը զրպարտիչ մարդ ե: Մի անդամ յես ձեր
բակը մտա, վոր ծիրան գողանամ, նա համ հորս խա-
րար տվեց համ ուսուցչին և յերկուսն ել ծեծեցին ինձ:

— Լավ, չեմ ասի, — խոստացա յես, վորպեսզի
ձեռ քաշի ինձնից:

— Իսկ յեթե ասես տղերքին կհրամայեմ քար-
մուրդ անեն քեզ, այսինքն իշխ նահատակ անեն:



— Զե, չեմ ասի, — կրկնեցի յես և վորոշեցի իս-
կապես վոչինչ չասել:

Յես շատ եյի վախենում քարմուրդից:
Մի անգամ վոնց յեղավ մեր գյուղը մի մադրոք
յեկավ: Դա սրբերի կյանքի մասին պատմություններ
անող մարդ եր: Ծերերը հարեվան գյուղն ինչ վոր տո-
նակատարության եյին գնացել, և մադրոքի շուրջը
հավաքվել եյին միայն յերիտասարդ տղերքն ու մա-
սուկները: Մադրոքն սկսեց պատմությունը: Յերբ
պատմությունը հասավ ամենահետաքրքիր տեղը պա-
հանջ գըեց.

— Տվեք ով ինչ կարող ե — հաց, փող, ձմեռուկ,
սեխ, չամիչ, ծիրանի չիր, և հետո յես կպատմեմ
մնացածը:

Բոլորը վաղեցին տները և ամեն մեկը բերեց և
մադրոքին հանձնեց ինչ կարող եր: Յես ել իմ մորից
մի բուռը չիր ուղեցի և տարա:

Մադրոքը բոլորը լցրեց պարկն ու գցեց իշխ վրա:

— Իսկ մնացածը հետո: Մյուս շաբթին կդամ,
կողատմեմ, ասաց նա և զնաց իր գործին:

— Զե, հիմի պիտի որատմես—վերջացնես: Յեթե
քիչ ենք հավաքել ելի՛ կբերենք, — խնդրեցին յերե-
խաները: Բայց և այսպես նա չհամաձայնեց և նստեց
իշխն: Բայց այդտեղ ինչ վոր մեկը գոչեց՝

— Քարմուրդ...:

— Քարմուրդ, քարմուրդ, — արձագանքեցին բո-
լորը միասին և կախվելով մադրոքի իշխ, ցած գլո-
րեցին, վոտի տակ տվին ու սկսեցին զնդստել:

— Վայ մեռա, — գոռաց մադրոքը: — Բաց թողեք
և բողեյին պատմեմ:

Բայց ջահեները նրան խփում եյին հա խիռոմ ու
տառում.

— Լո՛վ: Մեր քարմուրդը քո հեքյաթից համուլ ե:
Վերջապես մադրոքը բոլորովին թուլացավ, նա
արդեն զոռաւ ել չեր կարողանում:

— Դե հիմի ել թրջվոց զնենք, տղերք, բարձրաց-
քեք:

Կիսամեռ մաղղոքին քարշ տվին ու շպրտեցին մեր
դյուղի միջով անցնող գետակի մեջ։ Նրան մտցրին
ջրի մեջ, ապա քաշեցին—ափ հանեցին։ Նրա չալման
մնաց ջրի մեջ։ Մի պատանի բարձրացավ գետակի տ-
փին բուսած ծառը, ճյուղից կախվեց ջրի վրա և
վերցրեց — ափ նետեց մաղղոքի չալման։ Չալման
խոթեցին պարկի մեջ, իսկ իրեն մաղղոքին թաց
խալաթով նստեցրին իշխն և կենդանուն խոկեցին ճա-
նապարհով։

— Դե կորիր — չքվիր, քո պատմությունն ել զու
ել . . . զոչում եյին տղերքը իշխն փայտով անխնա հար-
վածելով։

Դրանից հետո յես շատ եյի վախենում քարմուր-
դից։ Այդ պատճառով ել յես անկեղծ սրտով ասացի
խալիֆային։

— Զե՛, յերեք վոչինչ չեմ ասի հորս։

— Հիմի յեկեք գնդակ խաղանք,—զոչեց խալիֆան։

Յերեկ դպրոցում առաջ ել եյին խաղացել այդ
խաղը։ Յերեխաները վեր ցատկեցին տեղներից, քըր-
քըրված խսիրները շպրտեցին անկյունը և հողե հա-
տակին փոսեր փորեցին՝ գնդակների համար։

Խաղն սկսվեց. — Խաղում եյին ծիրանի կորիզների
վրա։

Խորամանկները խարում եյին միամիտներին, ու-
ժեղները ծեծում եյին թույլերին և խլում նրանց կորիզ-
ները։ Վորը լալիս եր, վորը բղավում, վորն ել տուր ու
զմփոց եր սարքել։ Խալաթները պատառութվում եյին։

Մի աղա մոտեցավ ինձ և ասաց.
— Խաղա թե չե քեզ կալլյակուրակ կանենք։

Ինձ վոչ գնդակ ունեյի վոչ ել կորիզներ, տոհնք
խաղալ ել չգիտեյի։ Մայրս վոչ խալաթիս, վոչ բլուզ-
ներիս վրա, վոչ մի տեղ զրպան չեր կարում։

— Յերեխան, վոր զրպան ունեցավ, զողություն
կանի, — ասում եր նա։ Փողոցով խաղալիքները ձեռքին
գնալն ել չեր թույլատրում։ Այդ պատճառով ել յես
վոչ մի խաղ չգիտեյի։

Բայց կալլյակուրակից յես վախենում եյի, — դա մի
շատ վատ ոյին եր։ Յերեխաներից մեկին նստեցնում ե-

յին չքջանը կենտրոնում, վերցնում եյին թասակն ու յե-
ղունդներով այնպես եյին կտուտում նրա գլուխը, ինչ-
պէս փայտվորիկը ծառի բռնը։ Յես չգիտեյի ինչ ա-
նեմ, ինչպես ազատվեմ կալլյակուրակից։ Բայց այդ-
տեղ ինձ ոգնության հասավ խալիֆան։

— Թողեք դրան, թողեք նստի, — ասաց նա. — Նրա
հայրը շատ վատ մարդ է։

Թեև ինձ դուր չեկավ, վոր նա իմ հորը վատ մարդ
անվանեց, բայց դրանից հետո, ով վոր մի փոքր հետե-
միցա եր ընկնում — անմիջապես բղավում եյի խալի-
ֆային։

— Հեռացրու սրանց, թե չե ձեր բոլոր արարքները
կոկատմեմ հորս։

Յեվ խալիֆան անմիջապես զսպում եր յերեխանե-
րին։

Գնդակ խաղալուց հետո խալիֆան դոչեց։

— Իսկ հիմի սկսում ենք լորերի կոխվը։

Սակայն յերեխաներն այնքան ել հոժար չեյին այդ
խաղին, քանի վոր միայն խալիֆան լոր ուներ, մեկ ել
մի ուրիշ տղա։

Ապա խալիֆան ասաց.

— Մենք մեր լորերը կկուվեցնենք, իսկ դուք իրար
մեջ գրազի բռնվեցեք կորիզների վրա, թե ում լորը
կհաղթի։

Այդ դուր յեկավ յերեխաներին, միայն շատերն
այլևս կորիզներ չունեյին — տարվել եյին գնդակ խաղա-
րիս։

— Լավ, — վորոշեցին նրանք, — մենք տուն կվաղենք
կորիզներ բերելու։

Մինչ յերեխաները տուն վագեցին, խալիֆան մնա-
ցածների հետ լցրեց փոսերը, խսիրները դրեց իրենց տե-
ղը, իսկ կենտրոնում մի դափի չափ տեղ մաքրեց։

Շուտով բոլորն ել վերադարձան և սկսվեց լորերի
կոխվը։ Խալիֆան և յերկրորդ լորի տերը նստել եյին
իրար գիմաց, մաքրած տեղի յերկու կողմերում։ Նը-
րանց շուրջը տեղավորվել եյին մյուսները։ Ով նստե-
լու տեղ չեր դտել, կանգնել եր հետեվում։

Խալիֆան և մյուս տղան պայուսակներից հանեցին իրենց լորերին, լիզեցին նրանց կտուցները, տրորեցին վոտները, թքով շփեցին նրանց ճանկերը և թքեցին թեվերի տակ:

Խալիֆան ասաց իր հակառակորդին
— Քսան յես, քսան՝ դու, — պատասխանեց սառ
— Յերեսուն յես, յերեսուն՝ դու:
— Յե՛ս ինչքան, դո՛ւ ինչքան:
— Հիսուն յես, հիսուն՝ դու:

Վերջապես նրանք վորոշեցին՝ «Հարյուր յես, հարյուր ել դու»: Դա նշանակում էր, վոր յեթե մեկն ու մեկը լորը վախչի, նրա տերը հակառակորդին պետք է տա հարյուր ծիրանի կոբեզ:

— Դուք ել գրազ բռնեցեք, — ասաց խալիֆան մյուսներին:

Հերեն սկսեցին վեճի մտնել: Վոմանք խալիֆայի լորի համար եյին դնում, մտածելով, թե (իհարկե, պարզ ե, վոր խալիֆայինը ուժեղ կլինի), ուրիշները նրա հակառակորդի լորի համար եյին դնում: «Տասը յես, տասը դու», «Հիսուն յես, հիսուն դու», «Հարյուր յես, հարյուր դու», կանչում եյին յերեխաները զանազան կողմերից:

Խալիֆան և իր հակառակորդը կռվի ասպարեզ բաց թողեցին իրենց լորերին: Յերկու լորերն ել մատները չոելով և վիզները ձգելով կռվի մեջ մտան: Մեկը մյուսի գլուխը կտցահարեց, իսկ սա այդ ժամանակ քաշքում եր նրա փետուրներից: Առաջինն աշխատում եր կտուցով խիել հակառակորդի աչքին, իսկ սա բռնել եր նրա վզից և աշխատում եր զետին տապալել:

Շուտով անբախտ լորերի գլուխները ծածկվեց արյան բծերով: Այն ժամանակ խալիֆան և իր հակառակորդը վերցրեց ամեն մեկն իր լորին, շոյեցին, հարթեցին նրանց փետուրները և նորից բաց թողեցին ժարտադաշտը: Լորերը նորից սկսեցին դղղղել իրար: Մի քանի ընդհարումներից հետո խալիֆայի հակառա-



կորդի լորը շչաց—ո՛ւշտ, ո՛ւշտ— և փախավ։ Խալի-
ֆայի լորը հալածում եր նրան չըջանի մեջ։

Յերեխաները աղմուկ բարձրացրին, ծափ զարկեցին
հրճվանքից, սուլեցին, ձչացին։

Այդ պահին անսպասելի կերպով ներս մտավ ուսու-
ցիչը։ Ուրեմն, յերբ յերեխաները տուն եյին վազել կո-
րիզներ բերելու, մոռացել եյին դպրոցի դռար ներսից
փակել, և ուսուցիչը դասարան մտավ առանց գուռն
ծեծելու։

Բոլորն ել այնպես եյին տարված լորերի կովով,
վոր վոչ վոք չնկատեց թե ինչպես ուսուցիչը ներս մը-
տավ։ Յետ բոլորից շուտ տեսա ուսուցչին, վորովհետեւ
խաղի ժամանակ մի աչքով լորերին եյի նայում,
մյուսով՝ դռանը, և յես տեսա թե ինչպես զոների մեջ
յերեաց ուսուցչի այծային մորուսը։ Նա սուս ու փուս
ներս սողաց, գնաց իր տեղը և նստեց։ Յեվ միայն այն
ժամանակ, յերբ նա վերցրեց փայտն ու սկսեց հար-
վածել յերեխաների գլուխներին, այդ պահին միայն
նրանք տեսան նրան։

Վերջապես ուսուցիչը հոգնեց խիելուց, տեղավոր-
վեց իր «ախոռոռում» և այնտեղից ասաց ինձ։

— Դու, յերեկում ե, վոր խելքով լակոտ ես։

Յերեխաները սսկվել եյին իրենց տեղերում։ Խալի-
ֆան ցցվել եր ուսուցչի տուած։ Հավանաբար նա մտա-
ծում եր, վոր ուսուցիչը այս անդամ ել կհարցնի «մե-
ղավորների» անունները։ Սակայն ուսուցիչը վոչ մի
բանի մասին չհարցրեց և ասաց։

— Վազիր գնաց լճակից փայտերը բեր, վոր իմ կար-
դագիրությամբ գցել են այնտեղ։ Նրանք հիմի լավ տողել
են և շատ լավ հարկավոր կդան ձեղ մարդավարի վարք
սովորեցնելու համար։

Խալիֆան գնաց։ Յերեխաներն ուռենու տերենեցի
պես դողում եյին։ Միայն յես եյի հանդիսաւ։ Զե՞ վոր
ինքն ուսուցիչն ասաց, վոր յես «խելքով լակոտ» եմ։

Խալիֆան բերեց փայտերը և դցեց ուսուցչի տուած։
Ամենից առաջ հենց իրեն վայր դրեք, — ասաց ու-
սուցիչն առանց հապաղելու։

ՄԵԾ յերեխաներից մի քանիսը առաջ յեկան, իսա-
լիֆային ցած գլորեցին և վոտներին հաղցրին ֆալախ-
կան:

Նրա վոտքերի տակ դեռևս յերեռմ եյին անցրաւ
ձեժի հետքերը:

— Խփի՛ր, — հրամայեց ուսուցիչը:

Յերեխաներից մեկը վերցրեց խալիֆայի բերած
փայտերից մեկն ու հարվածեց նրա կրունկներին: Բայց
հենց առաջին հարվածից փայտի կտորները դես-դեն
թռան: Տղան վերցրեց յերկրորդ գավազանը, բայց սա
եւ ջարդվեց առաջին իսկ հարվածից: Բոլոր փայտերը
ջարդվում եյին ու դես-դեն շարրտվում առանց խիստ
ցավեր պատճառելու խալիֆային:

Ուսուցիչը փրփրեց, վերցրեց ջարդված փայտե-
րը, դնեց և ասաց.

— Այս փայտերը, վոր իմ կարգադրությամբ լճակն
եյին գցել թութի փայտեր եյին: Նրանք յերբեք չեյին
ջարդվի, մանավանդ, վոր մնացել են ջրի մեջ: Այդ
անպիտանը նրանց փոխարեն ուռի չոր փայտեր եթեցել
ու բերել:

— Գնա հենց հիմա լճակից բեր իմ փայտերը. —
կարգադրեց նա խալիֆային կախող տղային:

Տղան գնաց: Խալիֆայի վոտքերը առաջվա պես
դեռ մնում եյին ֆալախկայի մեջ:

— Լճակում փայտեր չկան. — Հայտնեց տղան վե-
րտպանալով:

— Պարզ ե, — ասաց ուսուցիչը, — այդ որիկան
պահել ե իմ փայտերը: Վոչինչ, յես թութի փայտերի
տեղակ նոնենուց դապանակներ կշինեմ: Իսկ նրա հետ
յես հենց հիմի իմ հաշիվը կմաքրեմ: Շուռ տվեք դրան
ու պառկեցրեք յերեսի վրա, — հրամայեց նա խալիֆա-
յին շրջապատող յերեխաներին:

Յերեխաները ֆալախկան հանելով խալիֆային
շուռ տվին յերեսի վրա: Ուսուցիչը վերցրեց իր գավա-
զանը և ինքն սկսեց խփել նրա մեջքին: Բայց և այսպես
խալիֆան չորեքթաթ անելով և տեղում պտտվելով

հնարավորություն չեր տալիս ուսուցչին կարգին ծեծե-
լու: Այն ժամանակ ուսուցիչը հրամայեց յերեխաներին
խալիֆային ամուր սեղմել և կպցնել հատակին: Այդ-
տեղ խալիֆան գոռաց:

— Զգո՛ւյշ, լորին կսատկացնեք:

— Ահա թե ի՞նչ... ուրեմն նրա մոտ լոր ե՞լ
կա, — հարցրեց ուսուցիչը, — մի գտեք, ինձ ավեք,
տեսնեմ այդ ինչ լոր ե:

Տղերքը արագությամբ ձեռքերը խոթեցին խալի-
ֆայի պայուսակը, լորը հանեցին և հանձնեցին ուսուց-
չին: Սա առանց յերկար-բարակ մտածելու, վոլորեց
և պոկեց թռչնիկի վիզը:

Խալիֆան գոռաց.

— Ահմեդին ել լոր ունի, բա ինչո՞ւ նրանն ել չեք
սպանում:

— Ահմեդի լորն ել գտեք, — հրամայեց ուսուցիչը:

Յերեխաները բաց թողեցին խալիֆային և ընկան
Ահմեդի վրա: Խալիֆան ել վեր կացավ գետնից, ձեռքը
կոխեց Ահմեդի պայուսակը, հանեց լորն ու իր ձեռքով
տվեց ուսուցչին:

Այդ լորին ել նույն բախտը վիճակվեց:

— Կորե՛ք, — ազա՛տ եք... եղուց եմ ծեծելու, —
զայրացած գոչեց դոմուլլան և ավելացրեց.

— Վաղը հինդշարթի յե, չմոռանաք հետներդ բե-
րել հինդշարթու հացը:

Իրար հրելով մենք գուրս վաղեցինք դպրոցից:
Ճանապարհին յերեխաները սկսեցին հաշվել, թե ո՞վ
ինչքան կորիզ ե տարել, ո՞վ ինչքան ե տարվել: Տա-
նողները պահանջում եյին իրենց հասանելիք կորիզնե-
րը, սրանք ել չեյին տալիս:

— Լորերը հո սատկել են, ել ի՞նչի համար տանք:

Բոլորը խառնվեցին իրար ու սկսվեց տուր ու դրմ-
փոցը: Իսկ խալիֆան և Ահմեդը հանեցին խալաթները,
մի կողմ քաշվեցին և սկսեցին կովել ընդունված բո-
լոր կանոնների համաձայն:

Իսկ յես վաղեցի տուն:

Յես առաջիւա նման դպրոց եյի գնում: Յերեխաները առաջիւա նման աղմկում եյին և կովում: Բայց չընայած ազմուկին ու անկարգություններին, յես մի քանի շարթում սովորեցի արաբական այբուբենի բոլոր տառերի անունները: Ինձ հետ յերբեմն խալիֆան երպարապում, յերբեմն ինքը ուսուցիչը: Հետո սկսվեցին «զերի և զարարի» պարապմունքները: (Զեր, զարար և պեշ կոչվում են այն նշանները, վորոնք դրվում են տողի գլխին և տակին ա, ի, ու հնչյունները նշանակելու համար): «Զերի և զարարի» դասերն ավելի հետաքրքիր եյին, քան տառերը սովորելը: Ինձ ասում եյին՝ «ալիֆ զարար—ա, ալիֆ զեր—ի, ալիֆ պեշ—ու»: Յեվ յես յերկարացնելով կրկնում եյի՝ «ալիֆ զարար—ա՛, ալիֆ զեր—ի՛, ալիֆ պեշ—ո՛ւ»: Այդպես յես սովորեցի այդ նշանները՝ արաբական այբուբենի բոլոր տառերի հետ: Հետո յեկավ յերկու զարարի, յերկու յերկու զերի և յերկու պեշի հերթը: Ինձ սովորեցնում եյին՝ «ալիֆ յերկու զարար նշանակում ե ան, յերկու զեր—ին, յերկու պեշ—ուն»: Այդ դասերն ինձ եւ ավելի դուր յեկան: «Ալիֆ յերկու զարար—ա՛ն, ալիֆ յերկու զեր—ի՛ն» — դա հնչում եր, վորպես իսկական յերդ:

Յուրաքանչյուր նոր դասի համար ինձ նոր դասական գրատախտակիկ եյին տալիս: Բայց ուսուցիչը նրա վրա յերբեք չեր գրում:

— Քո համը կովարար մարդ ե, նրա կարծիքով յես վատ եմ գրում: Ասա իրեն թող քեզ համար ինքը դրի ինչ վոր հարկն ե, — ասում եր նա և ինձ ուղարկում հորս մոտ: Հայրս ել գրում եր:

Տարվա վերջին յես անցա արջապային, այսինքն ոկսեցի կարդալ վանկերով, բայց այդ դասերն ինձ բոլորովին դուր չեկան: Ինձ սովորեցնում եյին.

— Ասա՝ ալիֆ և բե զարար—ար, ջիմ և դոլ զարար—ջադ: Արջադ:

Վանկերով կարդալը դժվար եր:

Մի անգամ հայրս ինձ ասաց.

— Այժմ, յերբ դու սկսել ես սովորել վանկերը, յես քեզ ցույց կտամ սովորածդ այրուբենը. կրկնի՞ր: Նա իմ առաջ դրեց դրված տախտակի կտորները և սկսեց հերթով հարցնել տառերը.

— Սա վո՞ր տառն ե: Իսկ սա՞ վորն ե....

Յես լուսմ եյի, քանի վոր վոչինչ պատասխանել չեյի կարող: Յես նույնիսկ չգիտեյի, թե ինչի մասին ե նա ինձ հարցնում:

Հայրս զայրացավ:

— Վերջապես եսքան ժամանակ ի՞նչ բանի ես յեղել ուսումնաբանում:

Յես սկսեցի կրկնել, այն ինչ սովորեցը ել եյին վանկերի դասի ժամանակ.

— Ալիֆ և բե զարար—ար, ջիմ և դոլ զարար—ջադ: Արջադ....

— Ե՛ բալամ, իսկական թութակ ես... ասում ես՝ բայց թե ինչ ես ասում — ինքոդ ել չգիտես.... առաջ հայրս:

Յես այն ժամանակ մտածեցի, վոր թութակ կոչվածը պետք ե վոր շատ վատ բան լինի: Միայն հետո յես իմացա, վոր թութակը դեղեցիկ և խելոք թուշուն ե:

Հայրս խուզարկեց պայուսակս, դտավ հին գրատախտակիկները, վորտեղ գրված եյին այրուբենի զերի և զարարի դասերը: Նա սկսեց մատով ցույց տալ այդ սև նախշերն ու հարցնել.

— Իսկ սա ինչ ե: Իսկ սա՞....

Յես նորից վոչինչ չկարողացա պատասխանել: Բայց և այնպես, յերբ հայրս ցույց տվեց ինձ այդ գրատախտակիկները ու ասաց՝ «կարգա՛», — յես անդիր կրկնեցի բոլորն ինչ գրված եր այնտեղ, և նույնիսկ այնպիսի բաներ, վոր չեյին գրված:

— Այս, դու իսկական թութակ ես, — նորից ասաց հայրս, — քո ուսուցիչն ու խալիֆան են մեղավոր: Նըրանք ստիպել են քեզ անողուտ անդիր անել, բայց վոչինչ չեն սովորեցը: Զեր ուսուցիչը անգրագետու քոռ

մարդ ե, իսկ յես, քոռից սուր աչք եմ պահանջում: Յես
եմ հիմարը. եսով չզնաս դպրոց...:

Յես շատ ուրախացա. վանկեր կարդալն ինձ շատ
էր ձանձրացրել:

VI

Հայրս իր մոտ հրավիրեց քաթիրին, մութավալուն
և ժուազուն* ու մի քանի ծերունիների: Յերեկոյան նը-
բանք յեկան: Դաստարախանը փուցին, շիրբիրինջու
տմանները շարեցին վրան:

Պետք ե ասել, վոր միշտ, յերբ մեզ մոտ հյուրեր
եյին գալիս, մեր տանեցիք վոչ թե փլավ եյին յեփում,
այլ շիրբիրինջ: Հայրս ասում եր մորս.

— Փլավին շատ ե յուղ գնում, դեռ միս ել ե Հար-
կավոր, իսկ շիրբիրինջը եժան ե, միայն մի քիչ բրինձ
կառնենք, դե կաթն ու մի գդալ յուղն ել վոչինչ, կո-
վը տանիցն է:

Բայց ամեն անդամ, յերբ ինձ ուղարկում եյին խա-
նութ բրինձ առնելու, հայրս սովորեցնում եր.

— Զասես թե շիրբիրինջ ենք յեփելու հա՛, թե չե-
կատ բրինձ կտան:

Մի անդամ յես հարցրի.

— Ասեմ փլա՞վ ենք յեփում...:

— Վոչ, —պատասխանեց հայրս, —դա ստախոսու-
թյուն կինի: Չսովորես խարելը: Վոչինչ մի ասի:

Յեկ ահա, յերբ հյուրերը շիրբիրինջը կերան, լի-
դեցին — մաքրեցին ամանները և սկսեցին թեյ խմել,
հայրս դիմեց քաթիրին.

— Յես նեղություն եմ տվել ամենահարդելի մարդ-
կանց, նրանց հրավիրել եմ այստեղ, վորպեսզի մի քիչ
խոսնենք մեր ուսուցչի մասին:

* Քարիր, մուրավալի և մուագին— թուսումանական կրո-
նական պաշտոնյաներ են:

— Ե՛, ի՞նչ ե պատահել, —զժղոհ ձայնով հարցրեց
քաթիրը:

— Բան չի պատահել, միայն մարդն անգրագետ ե,
տուաց հայրս,—նա նույնիսկ տառերը գրել չդիտի,
ենուկս վոր իմ տղի տախտակի կտորների վրա յես եմ
դրելիս յեղել:

Մութավալին ասաց.

— Թե վոր իր իմացածն ել սովորեցնի մեր գյուղի
յերեխաններին, եղ ել հերիք ե: Մեր գյուղում վոչ վոք
միտք չունի իր տղային խմաստուն մարդ դարձնի:

Հայրս տարութերեց գլուխը:

— Մեր ուսուցիչը չի կարողանում յերեխաններին
սովորեցնել նույնիսկ այն, ինչ ինքը դիտի: Իմ յերեխան
ամբողջ ձմեռը սովորել ե, հասել ե արջադին, իսկ յեթե
գրես «ալիֆ» և «բե», չի կարող ասի վո՞րն ե «ալի-
ֆը», վորը «բեն»: Հետո՝ ուսուցիչը ամենեւին ուշա-
դրություն չի դարձնում, թե ինչ բանի յեն մեր յերե-
խեքը: Բոլորն ել լոր խաղացող են դառել:

Յես հասկացա, վոր հայրս դիտի մեր խաղերի ու
չարությունների մասին, և խիստ վախեցա: Յես մտա-
ծեցի, վոր յեթե խալիֆան իմանա մեր այդ խոսակցու-
թյան մասին, ինձ քարմուրդ կանի: Նա անպայման կը-
կարծի, վոր յես եմ հորս սկատմել մեր դպրոցական
խաղերի մասին:

— Յեթե դուք մեր ուսուցչից ավելի դրագետ եք
և յեթե դուք ավելի լավ կառվորեցնեք, ավելի լավ ե
ինքներդ սովորեցնեք ձեր յերեխային: Ել ինչ կարիք
կա հինգշաբթու հաց և ուրիշ բաներ տալու ուսուցչին:
իսկ ուսուցչին իրեն տեղը հանդիսա թողեք և մարդու
հացը մի՞ք կտրի, — ասաց քաթիրը:

Հայրս պատասխանեց.

— Ինձ մի կտոր հող ունեմ, պետք ե վար ու ցանք
անեմ վոր պահեմ ընտանիքս: Պարապ ժամանակ ջրա-
պացի ակներ պիտի շինեմ: Բացի դրանից ձմեռը յերե-
խանց համար շորացու եմ դործում: Յեթե յես զործու-

թողած յերեխին դաս տամ, բա ո՞վ և աշխատանքս տնելու:

Հայրս կնճռոտեց ճակատը, մի փոքր լոեց և տպա ծիծաղեց ու նայեց քաթիբին:

— Ճիշտն ասած յես ձեզ հրավիրել եմ, վոր խոսե՞ք ուսուցչին վոնդելու մասին և նրա տեղը մի ուրիշ լավը ճարենք: Ե՛հ, վոր համաձայն չեք գոնե ինձ համար մի վորեւ գործ կատարեցեք, վորպեսզի իմ շիրբիրինց անտեղի չանցնի:

Հայրս մի սովորություն ուներ, վորը շատ մարդկանց դուր չեր գալիս: Ինչ վոր սրտումը կար ասում եր բոլորին ուղղակի, առանց վորեւ մեկից քաշվելու: Յեվ ահա հիմա ել նա ծերունիներին ուղղակի ասաց թե ինչի յե հրավիրել նրանց: Բայց վորպեսզի հյուրին չիրավորի այդ բոլորը նա ասաց ժպտալով:

— Դե՛, ասացեք տեսնեմ ինչ անեմ, վոր հանդիսաւ սրտով մարսեմ քո տված շիրբիրինջը, հարցըց քաթիբը:

— Թողեք իմ յերեխեն սովորի ձեր տանը աղջիկների հետ, բիբի-խալիֆայի մոտ:

— Վո՞նց կարող ենք տղային խառնել աղջիկներին, հարցըց քաթիբը:

— Դա գեմ չի լինի մուսուլմանական որենքին, — պատասխանեց Հայրս, — իմ յերեխան գեռ յոթ տարեկան ե, իսկ ինչ վերաբերում է որենքին, ապա որենքը թույլ ե տալիս, վոր տղան մինչեւ տասնյերկու տարեկան դառնալը աղջիկների հետ լինի:

Քաթիբը մտածեց—մտածեց և վերջը համաձայնեց.

— Լավ: Ուղարկեցեք թող սովորի: Միայն մեռ շուտ-շուտ կանչեցեք շիրբիրինջ ուտելու:

Յեվ նա ել ծիծաղեց:

Դրանով ել վերջացավ խոսակցությունը: Յես ուրախ եյի, վոր այլևս չեմ դողալու խալիֆի ու նրա քարմութիւ ահից:

Մյուս որը մայրս ինձ տարավ բիբի-խալիֆայի դպրոցը: Բացի լավաշով և քիչմիշով լցված սկոտեղից մայրս հետը վերցրել եր նաև թաշկինակ ու թասակ:

Բիբի-խալիֆան մեր քաթիբի կինն եր: Ինքը քաթիբը Դարվազայից եր, իսկ նրա կինը—Գեղղուվանից:

Բիբի-խալիֆան միջին տարիքի կին եր, սպիտակ գեմքով, գեր մարմնով և մեծ փորով:

Յերբ մենք մտանք նրա մոտ, նա վոտները ծալած նստել եր սենյակի առաջին անկյունում, վերմակների ծալքի վրա:

Սենյակում, թաղիքների վրա նստոտել եյին աղջիկները:

Այդտեղ գերաններ չկային դպրոցի նման: Յուրաքանչյուր աշակերտուհու առաջ դրված եր բամբակյա մզգակած մի բարձ, վորի վրա աղջիկները կարդալիս դնում եյին իրենց գրքերը:

Բիբի-խալիֆան իմ մորը շատ սրտաբաց ընդունեց: Նա բարեկց, հարցըց մորս առողջության ու գործերի մասին, ապա ծիծաղեց և ասաց, վոր ինձ պետք ե սովորեցնի իմ հոր շիրբիրինջի համար և վերջում ավելացրեց.

— Իսկ յերբ ձեր վորդին հասնի թարբաթին*, դուք ինձ համար ել մի քերեղա** շիրբիրինջ բերեք:

— Թե վոր ասծու կամքով ապրեցինք մինչեվ եղ որը, վոչ թե շիրբիրինջ, այլ փլավ ել կերեմ, — պատասխանեց մայրս:

Բիբի-խալիֆան բացեց դաստարխանը, պատառպատառ արավ լավաշը, և դոմալլոյի նման մի մասը առանձնացրեց աշակերտուհիների համար, բայց սա Հացի կտորները չչպրտեց յերեխաների առաջ, ինչպես

* Թարբաթը—մուսուլմանների սուրբ գրքի—Ղուրանի գլուխներից մեկի անունն ե:

** Քերեղան—կավե խոր ափսե:

մեր ուսուցիչն արավ, այլ տվեց իր խալիֆա—աշակերտուհուն — ամենից մեծ աղջկան, իսկ սա բաժանեց ամեն մեկին մի կտոր: Ի միջի այլոց, հացի մեծ մասն ինքը՝ խալիֆա—աշակերտուհին կերավ:

Սկսեցին աղոթք կարդալ: Բիրի-խալիֆան ստիպեց ինձ ասել «բիսմիլլո» և «աստղու բիլլո», և գրանով ել վերջացավ ամբողջ արարողությունը: Մայրս գնաց, իսկ յես մնացի աղջիկների դղրոցում: Այսպես սկսվեց իմ աւսումը յերկրորդ անգամ:

Բիրի-խալիֆան ինձ դաս տվեց այրուբենի մեջտեղից, սկսած «սին» տառից, մինչ ուր հասել ելի յես մզկիթին կից դղրոցում: Նա այնպես չեր սովորեցնում, ինչպես դոմուլլոն: Նա ձեռքին մի ձող եր բռնելն ըստ նով ցույց եր տալիս տառն ու հետն ել տալիս եր այդ տառի անունը: Այնուամենայնիվ նոր ուսուցչուհին ել չեր հետաքրքրվում՝ յես հասկացա՞թե վոչ:

Բիրի-խալիֆան շարունակ զբաղված եր: Նա հերթով կանչում եր իր աշակերտուհիներին և դասեր եր տալիս: Այդպես անցավ ամբողջ որը:

Մենք բիրի-խալիֆայի մոտ պարապեցինք առավոտյան թեյի ժամից սկսած մինչև կեսոր: Ժամը 12-ին բիրի-խալիֆան վերջացրեց պարապմունքները, և աղջիկները նախաճաշեցին: Նրանք հենց այդտեղ, դպրոցում կերան հետները բերած լավաշները: Յուրաքանչյուրն իր լավաշի կեսը տալիս եր բիրի-խալիֆային: Առաջին որը յես առանց հացի եյի յեկել, բիրի-խալիֆան ինձ տվեց աղջիկներից մեկից ստացած լավաշի կտորը:

— Այսոր յե՛ս եմ քեզ հյուրասիրում, իսկ վաղը դու ավելի հաց կը երես և ինձ շատ կտաս:

Նախաճաշից հետո աղջիկները մաքուր ավելցվին բիրի-խալիֆայի տունն ու բակը: Յերբեմն բիրի-խալիֆան հարկադրում եր յերեխաներին լվացք անել, և պատահում եր, վոր նույնիսկ յես ել եյի ողնում լվացքին:



— Սովորիր լվացք անելը, —ասում եր նա, —կմեծանաս կզնաս Բուխարա մեղքեսում սովորելու, այնտեղ դու ես քո չորեցը լվանալու:

Բիբի-խալիֆայի հետեվում, պատնիվեր նույնպես մի յերկար փայտ եր կանգնած: Սակայն յես չտեսա, վոր նա այդ փայտով ծեծեր վորեւ մեկին: Յեթե աշակերտուհին վատ եր պատասխանում, բիբի-խալիֆան չթից կամ բյազից կարած իր խալաթի յերկար ուրայն թեվքով խփում եր նրա յերեսին: Դա վոչ մի ցավ չեր պատճառում, վոնց վոր մարդու յերեսին մի թեթև քամի փչի:

Բիբի-խալիֆայի աշակերտուհիները (բացի ինձանից այնտեղ բոլորն աղջիկներ եյին) վատ խաղեր չեյին խաղում և կռիվներ չեյին սարքում: Սպիտակեղենը լվանալիս կամ բակը մաքրելիս յերբեմն աղջիկները գաղտնի տիկնիկ եյին խաղում, խեցիների մեջ ավազից կերակուր եյին «յեփում», տիկնիկային հարստանիքներ եյին սարքում:

Ինձ համար նույնպես մի աղա տիկնիկ շինեցին և իմ տիկնիկս ամուսնացրին իրենց տիկնիկների հետ: Քանի վոր իմ տիկնիկից բացի աղա տիկնիկ չկար, ուստի յերբեմն նրան տաս-տասներյերկու կին եյին տալիս:

Ճիշտն ասած այդ խաղն ինձ շատ եր գուր գալիս: Բայց յերբեմն աղջկերքը գժտություն եյին մտցնում իրենց տիկնիկների մեջ, վորոնք բոլորն ել կնության եյին յեկել իմ տիկնիկին և իմ տիկնիկը հաճախ ստիպված եր լինում իր կանանցից մի քանիսին ապահովան տալ: Այդպիսի դեպքերում ինչվոր բան ծանրանում եր սրտիս վրա: Յես վորոշեցի, վոր յերբ մեծանամ, նույնիսկ յերկու կին ել չեմ առնելու, թեյեվ դաթույլատրվում ե մուսուլմանական որենքով:

VIII

Յես շարունակում եյի հաճախել բիբի-խալիֆայի դպրոցը: Արդեն նրա հետ կարդացել վերջացրել եյի

Խաֆտյակը, մի գիրք, վորի մեջ յերեխաների համար հավաքել են Ղուրանի ամենակարճ դղուխները։ Այդ դրբեց մի քանի դղուխ անդիր արի, կարդացի նաև բանաստեղծ Հաֆիզի վոտանավորներից մի քանիսը։ Յել այնուամենայնիվ յես մնացի անդրադեռ—յես կարողանում եյի կարդալ միայն այն, ինչ սովորեցրել եր Բիրիխալիֆան։ Որինակ, Հաֆիզի բանաստեղծությունը, վորը յես սովորել եյի դպրոցում, ամեն տեղ կարող եյի կարդալ ինչ ձեռագրով ել վոր գրված լիներ։ Մինչդեռ նրա մյուս բանաստեղծությունները, վորոնք դպրոցում չեյի սովորել, չեյի կարողանում նույնիսկ դրբեց կարդալ։

Դրել յես բոլորովին չեյի կարողանում։

Վերջի վերջո հայրս ինձ վերջրեց Բիրիխալիֆայի դպրոցից և ուսման տվեց իրեն՝ քաթիրին։

Այդ ժամանակ յես արդեն տասը տարեկան եյի։

Բայց գեռ մինչ այդ հայրս սովորեցրեց ինձ այրումենով հաշվելը։ Նա ինձ հետ պարապում եր ամեն յերեկո։ Սկզբում նա ինձ սովորեցրեց տառերն արտասանելը։ Հետո սովորեցի թե ինչպես պետք ե տառերն իրար հետ կարդալ։ Յերբ յես այդ ել սովորեցի, հայրը բացատրեց, վոր յուրաքանչյուր տառը միաժամանակ վորեվէ թիվ ե, — ալիֆը—մեկ, բեն—յերկու, չիմը—յերեք, դալը—չորս, զայը—հինգ։

Մի ամսում նա ինձ սովորեցրեց ամրող տյրուրենի տառերի թվային նշանակությունը սկզբից մինչև վերջ։ Ասա սկսեց հաշիվներ անելը սովորեցնել։ Սկզբում յես սովորեցի միավորները, ապա տասնավորները, հարյուրավորները—մինչև հազարներ։

Յերբ այդ բոլորն արդեն անցել եյի, հայրս ասաց—
— չիմի յես քեզ մի շատ հետաքրքիր բան ել կոռվորեցնեմ։ Ահա իննը թիվ և մի զերո—այդ բանը չնդկաստանի գիտականներն են չնարել։ Այդ ինը թվով և մեկ զերոյով աշխարհում ամեն ինչ կարելի յե հաշվել։

Յես շատ զարժացա և ուզում եյի իմանալ թե այդ

վոնց ելինում։ Այսը վոնց կարելի յե տասը նշանով հաշվել ամբողջ աշխարհը, դա իսկի հավատալո՞ւ բան է։ Ինձ ել ահա տասը մատ ունեմ, բայց յերբ յես ուզեցի նրանցով հաշվել շաբթվա որերը, մի քանի անգամ խառնեցի հաշիվը։

Սկսեցի ինդրել հորս, վոր նա ինձ շուտ սովորեցնի այդ տասը կախարդական նշանները։

Հայրս դարձի անցավ։

Սկզբում նա ինձ հերթով ցույց տվեց բոլոր իննը թվերը։ Ամեն որ նա մի նոր թվանշան եր ավելացնում իմ սովորածին, իսկ բոլորից վերջում ինձ ցույց տվեց զերոն։ Հետո բացատրեց, թե ինչպես մեկից և զերոյից ստացվում ե տասը, յերկուսից և զերոյից — քան։ Դա բոլորովին ել դժվար բան չեր։

Յերբ յես հաշվելը սովորեցի, հայրս ասաց ինձ։

— Դու այնպիսի բաներ սովորեցիր, վոր մեր դյուզում վոչ չգիտի։ Ինչ վերաբերում ե տառերով հաշիվ անելուն, դա նույնիսկ դյուզի ուսուցիչն ել չգիտի, վորն առաջ սովորեցնում եր քեզ։

Շուտով պատահեց մի դեպք, վորից հետո յես խոհապես կարող եյի հապատանալ իմ գիտելիքներով։

Այսպիսի մի դեպք եր։

Ինչ—վոր ժամանակ մեր գյուղում ապրած մի սրբի զերեզմանի վրա տոնեցին նոր տարին։ Հարեան գյուղերից բաղմաթիվ՝ հյուրեր եյին յեկել։ Սկսվեց ըմբշամարտը։ Բաժանվեցին յերկու խմբի։ Կենտրոնում մի ազատ հրապարակ թողեցին։ Հայրս իր խմբով նստել եր հրապարակին շատ մոտ, իսկ յես՝ նրա կողքին։ Յերկու կողմերից առաջ եյին զալիս «փահլեվանները» (ըմբիչ), կոխ եյին բռնում, ուժեղները տապալում եյին թույլերին։ Սկզբում հակառակորդներից վոչ մեկին չհաջողվեց փայր գցել մերոնցից մեկն ու մեկին։ Մեր դյուղը հաղթող գուրս յեկավ։

Բայց ահա հակառակորդ խմբից առաջ յեկավ մի յերիտասարդ, վորը սովորել եր Բուխարայում (նրան

մոլլա-բաչա եյին կոչում)։ Նրան կանչեցին կռվի բըռ-նըգելու մեր տղերքից մեկի հետ, վորը հենց այդ ժամանակ տապալել եր հակառակորդ փահլեվանին։

Մեր ըմբիչն առանց յերկար-բարակ մտածելու վրա հասավ և բռնվեց այդ մոլլա-բաչայի հետ։ Բայց մոլլա-բաչան շատ արագությամբ վայր գցեց նրան։

Մեր կողմից մի յերիտասարդ ել դուրս յեկավ և նույնպես մարտի հրավիրեց մոլլա-բաչային։ Բայց ըստ յերեսութիւն նա մոլլա-բաչային շատ հզոր թվաց, վորովհետև նա ասաց։

— Վո՞չ, յես դրա հետ կոխ չեմ բռնի։ Դա չորան ե, իսկ յես՝ գիտուն։ Յեթե գիտունը չորանի հետ կոխ բռնի, դա ստորացում կլինի գիտունների համար։

Հայրս լսեց դա և խիստ զայրացավ։ Նա վեր կացավ տեղից, բռնեց կռնատակերիցս և տարավ կանգնեցրեց հրապարակի կենտրոնում ու իր մոտ կանչեց մոլլա-բաչային։ Սա մոտեցավ և հարցրեց։

— Ի՞նչ եք առում։

— Դուք ո՞վ եք, գիտուն թե փահլեվան։

— Յես գիտուն — ըմբիչտ եմ, — պատասխանեց մոլլա-բաչան։

— Յեթե դուք գիտուն եք, — ասաց հայրս, — ապա առանց նրա պատիկությանն ուշադրություն դարձնելու լուսվեցեք իմ ութ տարեկան յերեխայի հետ։ Թող մարդիկ տեսնեն դուք իսկապե՞ս գիտուն եք։ Իսկ յեթե դուք փահլեվան եք, բռնվեցեք այն տղայի հետ, վորը ձեզ կոխի հրավիրեց, — նա իրեն տարիքով ել, հասակով ել համասար և ձեզ։ Թող մարդիկ տեսնեն, թե ով ե ձեզանից ուժեղ։ Դե՛ւ, ուրեմն, տոաջ յեկեք նախ տեսնենք ձեր գիտությունը։


Յեվ հայրս դարձավ ինձ.

— Դե, բալե՛ս, դրան մի վորեե բան հարցրու այրբենական թվերից, տեսնենք։

Յես առանց մտածելու հարցրի։

— «Տեն» ինչքան ե։

Մոլլա-բաչան լսեց, ակներե եր, վոր վոչինչ չեր



կարողանում պատասխանել։ Այն ժամանակ հայրս
առաջ ինձ.

Դու ինքդ ասա, թե «տեն» ինչքան ե:

— Չորսհարյուր, — պատասխանեցի յես բարձրա-
ձայն:

Հայրս սկսեց հարց-հարցի հետեվից տեղալ՝ «Ե՞ս
ինչքան ե» «Ե՞ս ինչքան ե», բայց մոլլա-բաչան վոչմի
հարցի չկարողացավ պատասխանել։ Դրանից հետո հայ-
րըս նույն հարցերը տվեց ինձ և յես պատամիանեցի:

— Ա'յ, ա'յ, ա'յ, — բացականչեցին մերոնք գլուխ-
ները ծաղրանքով որորելով։ Մոլլա-բաչան ամոթից
կարմրել եր։ Հայրս ասաց.

— Ճեր գիտունությունը փուչ դուրս յեկավ։ Հիմի
կարող եք կոխ բռնել մեր տղի հետ, ինչպես չորանը
չորանի հետ։

Յեվ մոլլա-բաչան ստիպված համաձայնեց։ Ըմ-
բըշամարտն սկսեց, և հենց վոր ըմբիշները իրար բռնե-
ցին՝ «գիտունը» գետին շպրտվեց։ Հրապարակի շուրջը
աղմկեցին, սուլեցին, ծափահարեցին։ Ըմբշամարտը
վերջացավ։

Տուն գնալիս մեր խմբի տղերքն ասացին հորս.

— Ճիշտն ասած եղ «գիտնականին» քո յերեխան
դետնին խփեց, քանի վոր վեճի մեջ հաղթվելուց հետո
նա ամոթից կոխ բռնելն ել մոռացավ։

Յես անչափ հպարտանում եյի իմ այդ հաջողու-
թյունով։ Ինձ թվում եր, վոր հավանաբար յես յուրաց-
րել եմ թոլոր գիտությունները։ Մինչդեռ իրականում
յես գեռնես անգրագետ եյի։

Սրանով յես վերջացնում եմ իմ պատմվածքն այն
մասին, թե ինչպես յես սովորեցի նախնական դպրո-
ցում։ Իսկ այն մասին, թե յես ինչպես դարձա գրա-
գետ, ինչպես դարձա գրող, այդ մասին մի ուրիշ ան-
գամ կպատմեմ։



Գավլիսէ լիազոր՝ Խ—9277. Հրատ. 4243. Պատվեր 1085.
Տիրաժ 4000. Թուղթ 62×94. Տպ. 4 մամ. Մեկ մամ. 30.726 նեշ.
Հեղինակային 3 մամուլ:

ՊԵՏՀՐԱՍԻ ՏՊԱՐԱՆ, ՅԵՐԵՎԱՆ. ԼԵՆԻՆԻ ՓՈՂ. 65



ՀՀ Ազգային գրադարան

NL0391127

2436.